կառուցվում է Հայոց Եկեղեցու բարերարներ տեր եւ տիկին Հայկ եւ Էլզա Դիդիզյանների ազնիվ նվիրատվությամբ եւ ծառայելու է եկեղեցականների վերապատրաստության, կրոնի ուսուցիչների պատրաստության, գիտաժողովների եւ հոգեւոր-կրթական տարբեր հավաքների համար:

Շարականների եւ սաղմոսների երգեցողությունից եւ աղոթասացությունից հետո Նորին Սրբությունը կատարեց կառուցվելիք կենտրոնի հողի օրհնությունը:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղեց ներկաներին: «**Աղոթքով թող բարի ընթացք եւ ավարտ ունենա երանաշնորհ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունով կառուցվելիք հոգեւոր-կրթական այս հաստատությունը, որ պիտի վեր հառնի Մայր Աթոռի սրբազան այս հողի վրա**», - նշեց Նորին Սրբությունը՝ մասնավոր իր գնահատանքն ու օրհնությունը բերելով արարողությանը ներկա լոնդոնաբնակ բարերարներ Դիդիզյաններին, ովքեր ստանձնել են նաեւ հովանավորությունը երջանկահիշատակ Հայրապետի 10-րդ տարելիցի միջոցառումների:

Այնուհետեւ արարողության մասնակիցները այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Հրաչ եւ Սյուզան Թուֆայաններ» Հայորդյաց տուն: Ավանդական աղ ու հացի արարողությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Հրաչ եւ Սյուզան Թուֆայանները կատարեցին Հայորդյաց տան նորամուտի արարողությունը: Հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանի բարիգալստյան խոսքից հետո Էջմիածնի Հայորդյաց տան սաները հանդես եկան գեղարվեստական հայտագրով:

Միջոցառման ավարտին Վեհարանում տեղի ունեցավ ընդունելություն, ուր Ամենայն Հայոց Հայրապետը վերստին հրավիրեց ներկաներին՝ այս օրերին վերստին ապրելու բարի հիշատակը երանաշնորհ Հայոց Հայրապետի, անդրադառնալու նրա կյանքին եւ բարի գործերին:

Երեկոյան Երեւանում՝ Արամ Խաչատրյանի ֆիլհարմոնիկ համերգասրահում, տեղի կունենա հուշ-երեկո եւ արխիվային լուսանկարների ցուցահանդես՝ նվիրված երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ԱՎԱԳ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Սեպտեմբերի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Սինգապուրի ավագ նախարար Լի Կուան Յուին:

Նորին Սրբությունը, բարի գալուստ մաղթելով Սինգապուրի ավագ նախարարին, անդրադարձավ հայ ժողովրդի հոգեւոր կյանքին, Հայ Առաքելական Եկեղեցու պատմությանը եւ արդի մարտահրավերներին: Հայոց Հայրապետն ի դեմս ավագ նախարարի իր գնահա-

Սինգապուրի ավագ նախարարը Վենարանում

Վենափառ Հայրապետն ընդունեց Առնոլիկ Լե Կոնեսի քաղաքապետին

տանքն ու շնորհակալությունը հայտնեց Սինգապուրի ժողովրդին երկրի ամենահին քրիստոնեական կառույցի՝ (1836թ.) Սինգապուրի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու հանդեպ ցուցաբերվող խնամքի համար:

Սինգապուրի ավագ նախարար Լի Կուան Յուին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ նշելով, որ իր համար մեծ պատիվ է այցելել Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Զրույցի ընթացքում նաեւ անդրադարձ կատարվեց այն մեծ ներդրմանը, որ հայ համայնքն ունեցել է երկրի շենացման եւ բարգավաճման գործում:

Հանդիպմանը ներկա էին ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը, ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը եւ Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ Ռուբեն Վարդանյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՌՆՈՒՎԻԼ ԼԵ ԿՈՆԵՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Առնուվիլ լե Կոնեսի քաղաքապետ Միշել Օմասին եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ քաղաքի Ս. Վարագա Խաչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Հարություն քահանա Տաշճյանի եւ ծխականների:

Նորին Սրբությունը, բարի գալուստ մաղթելով քաղաքապետին Ս. Էջմիածին ժամանելու առիթով, քաղցրությամբ վերհիշեց Հովվապետական իր այցը Առնուվիլ լե Կոնես եւ ջերմ ընդունելությունը քաղաքապետի ու ժողովրդի կողմից: Իր խոսքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ հայ-ֆրանսիական բարեկամությանը եւ իր գնահատանքը հայտնեց Ֆրանսիայի ժողովրդին ի դեմս քաղաքապետի՝ հայ ժողովրդին դեռեւս Ցեղասպանության օրերից ցուցաբերած եղբայրական զորակցության համար՝ նշելով. «**Նեղության, ցավի մեջ կերտված բարեկամությունը հավերժական է**»: Գարեգին Բ Հայրապետը մասնավոր իր գոհունակությունը հայտնեց նաեւ Առնուվիլ լե Կոնեսի եւ Նուբարաշենի միջեւ սկիզբ առնող համագործակցության առիթով՝ կատարյալ հաջողություն մաղթելով եւ իր օրհնությունը բերելով այդ առաքելության իրագործմանը:

Իր հերթին քաղաքապետ Օմասը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանն ընդունելության համար, ապա անդրադարձավ Առնուվիլում բնակվող հայորդիների կարեւոր դերակատարությանը քաղաքի կյանքում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ